

շատ աժան։ Ասոր համար եզրպատգի վաճառականներ շատ մը խեղճ գհրիններ գնելով կը տանէին իրենց երկիրը։

Այս յոյժ յետադէմ երկիրը, որ Յովհաննէս Թիւթիւնճիի ատեն հապէշ գերիշխանութեան տակ կը գտնուէր, միեւնոյն ատեն հարկատու ըլլալով Օսմանեան Սուլթաններուն — ինչպէս կը հաստատէ նաեւ Ագոնց (նոյն, էջ 573) — ԺԹ. դարուն սկիզբը բոլորովին անկախ էր և թօթափած թէ՛ հապէշ և թէ՛ օսմանեան յուժը։ Նուպիոյ ալ թագաւորը կրնար հանել 100,000 հեծեալ և հետեւակ զինուոր (Ագոնց, էջ 573)։

Մուհամմէտ Ալի փաշա, որ Սուտանը փորձած էր նուաճել, իր բանակները մինչև Սէննար զրկած է։ Իր զուակը՝ Իսմայիլ հոն սպաննուած ըլլալով սեւամորթներէն, Մուհամմէտ Ալի քաղաքը կործանել տրւած է։ Վերջին հարիւր տարիներուն, Մուհամմէտ Ալիի իշխանութենէն ետքն է, որ Եզրպոս երկարատեւ պաշարներէ յետոյ կրցաւ նուաճել Սուտանը, ինչպէս նաեւ Սէննարը։

Այսօր Սէննար Սուտանի «Կապոյտ Նեղոս» միւտիրիթին մէջ կը գտնուի. իսկ Սէննարի երկիրը կը տարածուի Սպիտակ և Կապոյտ Նեղոսի միջև, Մէքուար ջրամբարին քով, Կապոյտ Նեղոսի արեւմտեան կողմը։

Խարթումէն եկող երկաթուղին հոս երկուքի կը բաժնուի. մէկ գիծը դէպի արեւմուտք՝ Էլ Օպայաթ, միւսը՝ դէպի հիւսիս-արեւելք՝ Սուաքիմ կ'երթայ։

Կլիման սաստիկ տաք է և ունի անձրեւային եղանակ։ Հողը բարեբեր է, երկրագործութեան և